Կենտրոնական բանկը հրապարակել է նոր ցուցանիշ. բնակելի անշարժ գույքի գների ինդեքս

2025-12-26

ՀՀ կենտրոնական բանկը հրապարակել է Բնակելի անշարժ գույքի գների ինդեքսը (ԲԱԳԳԻ), որը նոր վիճակագրական ցուցանիշ է և նպատակ ունի արտացոլել բնակելի անշարժ գույքի շուկայում գների փոփոխությունների դինամիկան Հայաստանում։

ԲԱԳԳԻ-ն հաշվարկվում է եռամսյակային պարբերականությամբ՝ հիմնվելով Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից գրանցված շուկայական գործարքների տվյալների վրա։ Ցուցանիշի հաշվարկման ընթացքում կիրառվում է այնպիսի մեթոդաբանություն, որը հնարավորություն է տալիս գների փոփոխությունները ճշգրտել գույքի որակական հատկանիշների ազդեցությունից և ապահովել գների միջին փոփոխությունների առավել ճշգրիտ գնահատումը։

2025 թվականի երրորդ եռամսյակում բնակելի անշարժ գույքի գները նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատ աճել են 5.5 տոկոսով, իսկ նախորդ եռամսյակի համեմատ՝ 1.9 տոկոսով։ Մասնավորապես, նույն ժամանակահատվածում բնակարանների գներն աճել են 2.0 տոկոսով, իսկ բնակելի տների գները՝ 18.6 տոկոսով։ 2025 թվականի երրորդ եռամսյակում Հայաստանում իրականացվել է 7,113 բնակելի անշարժ գույքի առուվաճառքի գործարք՝ շուրջ 215.1 մլրդ դրամ ընդհանուր արժեքով։

Բնակելի անշարժ գույքի գների ինդեքսը Կենտրոնական բանկի կողմից հրապարակվում է անշարժ գույքի շուկայի վերաբերյալ տեղեկատվության թափանցիկության բարձրացման, ինչպես նաև դրամավարկային և մակրոպրուդենցիալ քաղաքականությունների վերլուծական հիմքերի ամրապնդման նպատակով։ Ցուցանիշը կարող է օգտագործվել քաղաքականություն մշակողների, վերլուծաբանների, գնահատողների և լայն հանրության կողմից՝ շուկայի միտումների գնահատման համար։

ԲԱԳԳԻ-ն հաշվարկվում է եռամսյակային պարբերականությամբ և հրապարակվում է հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող 45-րդ օրը։

ԲԱԳԳԻ-ի վերաբերյալ մանրամասն տվյալները, գծապատկերները և հաշվարկման մեթոդաբանությունը հասանելի են ԿԲ պաշտոնական կայքէջում հետևյալ

հղումներով՝ , :